Դրամաշնորհային աջակցություն
«Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Մալիշկա և Գետափ գյուղերում ոռոգման ցանցի ստեղծման նախագիծ»
ծրագրի ստորագրման արարողություն

2023թ.-ի հոկտեմբերի 12-ին Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանում տեղի ունեցավ «Մալիշկա և Գետափ գյուղերում ոռոգման ցանցի ստեղծման նախագծի» մինչեւ 76,931 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորիի և Եղեգնաձոր համայնքի ղեկավար պարոն Դավիթ Հարությունյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Ավագյանը և Գետափի գյուղապետ Երվանդ Գալստյանը, ինչպես նաև համայնքապետարանի մի շարք աշխատակիցներ:

Այս ծրագիրը նպատակ ունի ապահովել ոռոգման ջրի հասանելիությունը բոլոր մշակովի տարածքներում, որտեղ ագարակատերերը կկարողանան զբաղվել արդյունավետ գյուղատնտեսական գործունեությամբ՝ Մալիշկա և Գետափ գյուղերում գործող 898մ ոռոգման ցանցերի վերանորոգման միջոցով: Այս ծրագիրը նաև նվազագույնի կհասցնի ջրի արտահոսքը ոռոգման ցանցերից, որոնք հանգեցնում են տների հեղեղումների և առողջապահական խնդիրների՝ դրանով իսկ նպաստելով ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Արդյունքում, տարեկան շուրջ 7000 գյուղերի բնակիչներ կօգտվեն ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը


Դեսպան Ֆուկուշիմայի և պարոն Հարությունյանի միջև դրամաշնորհային պայմանագրի ստորագրում

Անպաշտպան ջրատար, որտեղ կտեղադրվի խողովակաշար

Մալիշկա մանկապարտեզի արտաքին պատը վնասվել է մշտական ջրի արտահոսքից